Հավելված 3

Հաստատում եմ՝ _____ Գ. Գրիգորյան

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական

կենտրոն» հիմնադրամի տնօրեն

«10» հոկտեմբերի 2023թ.

Կ.Տ.

# «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամում հարցումների անցկացման կարգը

1. Սույն կարգը սահմանում է «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամում (այսուհետ՝ Հիմնադրամ) հարցումների անցկացման նպատակը, ձևը, պարբերականությունը:

2. Հիմնադրամում հարցումներ իրականացնելը նպատակ է հետապնդում բարելավել կրթության որակը, ինչն իրականացվում է ՊԻԳԲ (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) շրջափուլի միջոցով:

3. Հարցումները Հիմնադրամի իրականացրած գործունեության մշտադիտարկման և գնահատման գործիք են:

4. Հարցումների միջոցով հնարավոր է.

- վերհանել շահակիցների կարիքները,
- վերհանել շահակիցների բավարարվածությունը Հիմնադրամի ծավալած գործունեությունից,
- բացահայտել շահակիցների տեղեկացվածությունը Հիմնադրամում իրականացվող գործընթացներից:

5. Հիմնադրամում հարցումներ իրականացնելու նախաձեռնողականություն կարող են ունենալ կրթության որակի պատասխանատուն, Կարիերայի կենտրոնի պատասխանատուն, ուսումնամեթոդական խորհուրդը, որակի ապահովման ուսանողական հանձնաժողովը:

6. Հարցումներ կարող են անցկացվել ինչպես անանուն, այնպես էլ անվանական:

7. Հարցումներ կարող են իրականացվել ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:

8. Հարցումներն անցկացվում են տարեկան պարբերականությամբ: Անհրաժեշտությունից ելնելով՝ հարցումներ կարող են անցկացվել ավելի հաճախ:

9. Հարցումների ժամանակացույցը նշվում է որակի ապահովման պատասխանատուի տարեկան աշխատանքային պլանում:

10. Հարցումներ իրականացնելուց առաջ կազմվում է հարցաշար:

11. Հարցաշարի հարցերը նախապես մշակվում են կետ 5-ում նշված միավորների կողմից:

12. Յուրաքանչյուր հարցաշար քննարկվում է որակի ապահովման պատասխանատուի հետ:

13. Հարցաշարում հարցերը շարադրվում են հստակ և նպատակային:

14. Հարցաշարում կարող են լինել ինչպես բազմակի ընտրության, այնպես էլ շարադրանք պահանջող հարցեր:

15. Հարցումն իրականացնելուց առաջ հարցման մասնակիցներին ներկայացվում է հարցման նպատակը, հարցաշարի լրացման ձևը:

16. Հարցումն անցկացնողը (անցկացնողները) և հարցման մասնակիցները պահպանում են հարցման գաղտնիությունը:

17. Հարցման արդյունքների վերլուծությունն իրականացվում է որակի ապահովման պատասխանատուի կողմից:

18. Որակի ապահովման պատասխանատուն հավաքագրված որակական և քանակական տվյալները տրամադրում է Հիմնադրամի տնօրենին և հարցումը նախաձեռնող միավորին:

19. Կատարված վերլուծությունների հիման վրա մշակվում է գործողությունների պլան՝ բարելավման գործընթացներ իրականացնելու նպատակով:

20. Հարցումները պահպանվում են որակի ապահովման պատասխանատուի մոտ 3 տարի ժամկետով:

Սույն կարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից: